ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 518-Ա « 25 » ապրիլի 2024թ.

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/52» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի թիվ 61 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքների գնման հայտը.

1. Ձևավորել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/52» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Ս. Պողոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ճանապարհների շահագործման և սպասարկման բաժնի պետ /հանձնաժողովի նախագահ/
Ա. Գյուրջյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի պատասխանատու ինժեներ
Հ. Գյուրջյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական ծրագրերի կառավարման բաժնի պետ
Ա. Գրիգորյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության նախագծերի կառավարման և փաստաթղթաշրջանառության բաժնի առաջին կարգի մասնագետ
Ա. Իսկանդարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ճանապարհների շահագործման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ

2. Բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության աշխատանքների գնումների բաժնի գլխավոր մասնագետ Վ. Մեժունցին:

3. Սահմանել, որ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ.1, հ.120 սենյակ):

4.Բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5.Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6.Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**